ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

Ազգագրութիւնը հայագիտութեան կարևոր ճիւղերից մէկն է։ Հայ ժողովրդի հոգեբանութիւնը ուսումնասիրելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել միջավայրը՝ ուր նա ապրում է, սովորութիւնները՝ որոնցով իր կեանքի ընթացքն է առաջ վարում, անգիր բանահիւսութիւնը՝ որով իր հոգեկան պահանջներին բաւարարութիւն է տալիս։ Կեանքի պայմանների արագ փոփոխութիւնը, քաղաքի և շրջակայ ժողովուրդների անխուսափելի ազդեցութիւնը արագօրէն կերպարանափոխում են հայ ժողովրդի բնիկ կեանքը։ Կանցնի մի սերունդ էլ, և այլևս շատ բան մեզ համար անդարձ կորած կը լինի։ Այս պատճառաւ ահա անհրաժեշտ է շտապեցնել ազգագրական ուսումնասիրութեան գործը։ Անհրաժեշտութիւնը դառնում է ստիպողական՝ մանաւանդ մեր գաղութների համար, այժմ, երբ հարց է ծագել հայութեան այդ մասը մուտք բեկորները հաւաքելու և հայրենի հողի վրայ տեղաւորելու։

Ահա այս պատճառաւ մի անգնահատելի ծառայութիւն է մատուցանում հայագիտութեան՝ մեր երիտասարդ մտաւորականներից մէկը. Արամ Երեմեանը, որ իր վրայ է վերցրել Նոր—Ջուղայի շրջանի հայ ժողովրդի ազգագրութիւնը ուսումնասիրելու դժուարին գործը։ Նա արդէն հրատարակել էր մի հատոր՝ Նոր—Ջուղա վերնագրով (տպ. Նոր—Ջուղա 1919), որի մէջ տալիս է Նոր—Ջուղայի տեղագրութիւնը և նրա եկեղեցիների, դպրոցների, ընկերութիւնների և այլ կրթական ու հասարակական հաստատութիւնների գործունէութեան պատմութիւնը՝ համառօտ կերպով։

Այժմ հեղինակը հրատարակում է իր երկրորդ գործը, որ կրում է «Սպահանի Փէրիա գաւառը» վերնագիրը և պարունակում է Նոր—Ջուղայի մերձակայ յիշեալ հայաշատ գաւառի ազգագրութիւնը, իբր յաւելուած կցելով նաև Քեաբուանդ գաւառը։ Այս աշխատութեան մէջ մանրամասն նկարագրուած է Փէրիայի հայաբնակ 26 գիւղերի և Քեաբուանդի 2 գիւղերի տեղագրութիւնը մի առ մի, բնակիչների շնչահամարը, նրանց տնտեսական դրութիւնը, այն ծանր հարստահարեալ վիճակը՝ որին ենթարկուած են գրեթէ անխտիր յիշեալ բոլոր գիւղերի հայերը՝ շրջաբնակ պարսիկ խաների ու աւազակաբարոյ լուսերի ձեռքին, նրանց նիստ ու կացը, սովորութիւնները,